

Մեր այս հայ տաղանդները պանծա-
ցնելու մասին՝ ցաւալի է ըսել՝ որ Հայ
մասնուր ժլատ գտնուեցաւ, կամ անկարող
եղաւ դրուատել զանոնք ըստ արժանայն։
Այնպէս այս երկրորդ նուագահանդէսի II.
III. IV. մասերն, ձեւացած B. Godardի
Griegի, Wieniawski, Kreislerի, Pop-
per-Auerի հատընտիր կտորներէ, զորս
Յարութիւն Սինան դաշնակով և Գէորգը
Յուլթակով, միշտ հատուած նուագելէ վերջ,
երաժշտապետը տեսնելով հանդիսականնե-
րու սակաւութիւնը և ոմանք անտարբե-
րութիւնը՝ տխուր շնչով մը կը կրկնէր
թէ՝ «Մեր ազգայինները չեն արժեր մեզ
նման երաժիշտ ընտանիք մ'ունենայ. անոնք
չատ հետո ևն ցնդարուեստական նուագա-
ծութեամբ նետաքրքրուել։ Պէտք է որ
մենք մեր Գէորգը յիշենք արտասահման,
ուր կարող պիտի ըլլայ գործել և վար-
ձատրուիլ, նիւթապէս և բարոյապէս»։

Մենք հաւաստեցինք թէ Գէորգը՝ Սի-
նանեան գեղարուեստական ընտանեաց կան-
խահաս այս ընծիւրը՝ այժմէն իսկ Հայ
երաժշտական բուրաստանին գեղեցկագոյն
ծաղիկն է։ Նա հազիւ թէ փոխադրուի
արտասահմանի յարմարագոյն մէկ միջա-
վայրը՝ մեր ցեղին հանճար բնորոշող եզա-
կան պերճ դէմք մը պիտի հուշակուի, հուշա-
կանուն շուրթակահարներու հոլիւն մէջ պի-

տի փայլի, ինչպէս լուսինը աստղերու մէջ.
և մեր այս հաւաստումին վերջակէտէն
առաջ՝ արդարութեամբ ըսենք թէ Գէորգի
Էօթէնի մօրն արժանիքը շատ մեծ եղած է։
Տիկին Էօթէնի՝ դուստր է այն նշանաւոր
քանոն հնչեցնող Գէորգ Մարտիրոսեանի՝
որ իր աղջիկը դաշնակի համար աշակեր-
տուհի ըրած էր Գրիգոր աղա Սինանեան.
ապա՝ ասոր որդին Մատէսդոյ Յարութիւնը
դաշնակի ուսուցիչը եղած էր։ Էօթէնին
ամուսնանալով Յարութիւնի Անտոն եղ-
բորը հետ, իբրեւ օրինակելի հայ տան տի-
կին մը, ո՛չ միայն համեստութեան և բա-
րեպաշտութեան ճանապարհէն առաջնոր-
դած է իր երկու սիրասունը զաւակները,
այլ նաև համբերատար դաստիարակուհւոյ
մը տոկունութեամբ՝ վեցամեայ Գէորգին
նախնական վարժուհին եղած է՝ հազուա-
գիտ ձիրքով մը անոր շուրթակի փորձե-
րուն՝ դաշնամուրի նուագածութեամբ ըն-
կերանալով։ Նոյնպէս Գէորգին հայրը՝
զանազան տարիներ զաւկին շուրթակահա-
րութեան՝ առաջնորդելէ յետոյ՝ զայն բոլո-
րովին յանձնած էր Մատէսդոյ Յարութիւնի
խղճամիտ առաջնորդութեանը, որով Գէորգ
պատանին ձեւացած է կանխահաս վիր-
դուօգ մը։

Հ. ՆԵՐՍԷՍ

ԱՌԱՋԻՆ ՊՈԼԵՏԵՒԻԿ ՍԱՒԱՌՈՒՍԱԿԸ

Ի Բ Բ Ն Ս Ո Յ Ե

Պոլշեկի հարտարարութեամբ վերացուց
առաջին կարծիք սաւառնակին շինութիւնը։
Պէտք էր ան շատ կանուխէն լմացած ըլլար,
վասի զի արդէն յատակագիծը պատրաս-
տուած էր 1919-ին, քայք կազմութիւնը
տեսնեց մինչեւ զարուն։ Այս ուստ սաւա-
ռակին երեւոյթը քիչ մը տարօրինակ է.
կարծես երկու սաւառնակներ են որ իրարու
միացած են. ունի երկու տարբեր կազ-
մուածք՝ երկու ձուլուածքով եւ երկու շար-
ժիչ մեքենայով։ Կրնայ տանիք եօթը ուղե-
ւորներ ու մնալ 5 ժամ՝ օդոյ մէջ, ժամը
180 քիլոմ. արագութեամբ։ Կարճ ատենի
մէջ կրնայ նաեւ զինուորական սաւառնակի
փոխարկուիլ։

«ԲԱԶՄԱՎԷՊ»-ի յունուարի այս թիւը կը
ղրկենք առ հասարակ այն ամէն անձանց՝
որոնք արդէն բաժանորդ էին 1922ի մեր
ամսանորթին։ Որոնք որ ցարդ չեն նորո-
գած իրենց բաժանորդագրութիւնը ներ-
կայ տարւոյս համար՝ հաճին ամսփապէս
իմացնել մեզ եւ կրկնել իրենց հասցէն,
ղրկելով միանգամայն բաժնեգիրը Ֆրանս
գաղը. 30. — տու. 6 ԿԱՆԻԻԿ։

Իսկ այն ամէն բաժանորդները, որոնք
դեռ չեն վճարած 1922ի իրենց բաժնեգիր-
նորը՝ իր ներուրկն փութով փակել իրենց
բաժագրութեանս հետ։

